Ծրագրի գաղափարի մրցույթի

*(*թարգմանություն բնօրինակից)*

Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնը հայտարարում է ծրագրերի մրցույթ՝ Հայաստանում գործող քաղաքացիական հասարակության խմբերի և նորաստեղծ (grassroot) շարժումների համար: Մեր նպատակն է աջակցել քաղաքացիական հասարակության նոր կազմակերպությունների զարգացմանը: Ինչպես նաև նպաստել փոփոխության ջատագովների հետ համատեղ նոր համագործակցային ցանցերի ստեղծմանն ու համախոհ խմբերի հետ կապերի ընդլայնմանը:

*Ծրագիրը բաղկացած է երկու փուլից. սա առաջին նախընտրական փուլն է:

Ով կարող է դիմել

Մրցույթն ուղղված է քաղաքացիական հասարակության այն խմբերին, որոնք իրենց գործունեությամբ հանրությանը դարձնում են առավել պատասխանատու, ժողովրդավար, իրազեկ, ներգրավված ու խնդիրներին արձագանքող:

Ինչ ենք մենք փնտրում

Մենք հետաքրքրված են աջակցել այն ծրագրերին որոնք ուղղված են *ցանցերի և լսարանների ընդլայնմանը, հանրության հետ համագործակցության ամրապնդմանը, ցանցերի ստեղծմանն ու համայնքների ակտիվ ներկայացուցիչների միջև կապի ամրապնդմանը: Ծրագրեր, որոնք կնպաստեն համայնքային զարգացման և որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիների ներգրավմանը, երիտասարդության ակտիվացմանը, կամ մարդու հիմնարար ազատությունների ոլորտում խնդիրների վերհանմանը:* Մենք նաև պատրաստ ենք աջակցել ձեր կազմակերպության կայունության ամրապնդմանն ուղղված ծրագրերի՝ ներառյալ սոցիալական բիզնեսը և քրաուդֆանդինգի արշավները:

Ծրագրի ընտրության ընթացքում առավելություն կտրվեն նորաստեղծ՝ առավելագույնը 5 տարվա պատմությամբ խմբերին: Մենք խրախուսում ենք նաև դիմել այն ծրագրերին, որոնք գտնվում են մարզերում, սահմանամերձ տարածքներում կամ աշխատում են այդ տարածքների բնակիչների հետ:

Ինչ է առաջարկվում

Դրամաշնորհային մրցույթը բաղկացած է երկու փուլից:

Առաջին փուլում դիմորդները ներկայացնում է ծրագրային գաղափարները: Երկրորդ փուլ անցած նախագծերը հնարավորություն կունենան ապրիլին ներկայացնել ծրագրի ֆինանսավորման համար նախատեսված հիմնական հայտն ու բյուջեն:

Այս ծրագրի շրջանակում կարելի է դիմել նաև համաֆինանսավորման: Այդ դեպքում անհրաժեշտ է տեղեկատվություն ներառել համաֆինանսավորող կազմակերպության մասին:

Դրամաշնորհի առավելագույն չափը՝ **10,000 եվրո է** :

Ներկայացվող ծրագիրը կարող է տևել՝ **6-12 ամիս:**

Վերջնական փուլում ընտրված ծրագրերը կարող են սկսվել 2023 թվականի հունիս ամսից ոչ շուտ:

Մենթորության հնարավորություն

Ընտրված դիմորդները հնարավորություն կունենան նպատակային ուղղորդում և մենթորություն ստանալ կենտրոնի մենթորների խմբի կողմից հետևյալ ոլորտներում.

• Ռազմավարական պլանավորում և ազդեցության գնահատում

• Շահերի պաշտպանություն և քարոզարշավ

• Ռազմավարական հաղորդակցություն

• Համայնքի կազմակերպում և խմբերի հետ աշխատանք

• «Պրոդուկտի» կառավարում (այդ թվում մոնիտիզացում)

• Բիզնես մենեջմենթ և կառավարում

• Մարքեթինգ և վաճառք

•Քրաուդֆանդինգ

Առաջին փուլը հաղթահարած մասնակիցները կարող են մենթորների հետ աշխատել իրենց ծրագրերի, կազմակերպության կառավարման բարելավմանն ուղղված թեմաների շուրջ, ինչպես նաև համատեղ քննարկել ու բարելավել իրենց հայտը, որը կներկայացվի վերջնական ընտրությանը: Մենթորությունը պարտադիր չէ, և նրանք, ովքեր կորոշեն չօգտագործել այն, կհրավիրվեն ուղղակիորեն ներկայացնել ամբողջական առաջարկը:

Երկրորդ փուլը հաղթահարած կազմակերպությունները, ըստ կարիքի, իրենց ծրագրերի իրականացման ընթացքում հնարավորություն կունենան շարունակել աշխատանքը մենթորների հետ:

Դիմում ներկայացնելու գործընթաց

Ծրագրի աջակցությանը դիմելու համար անհրաժեշտ է լրացնել գուգլ հայտաձևը:

Ոչ ամբողջական հայտերը չեն դիտարկվի: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը ս/թ մարտի 22-ն է:

Հայտերը պետք է լրացնել **անգլերեն կամ ռուսերեն**:

Յուրաքանչյուր կազմակերպություն կարող է ներկայացնել միայն մեկ հայտ:

Հարցերի դեքպքում կարող եք գրել հետևյալ հասցեով՝ pcsc-arm@protonmail.com.

**Տրամադրված տեղեկատվության գաղտնիությունն երաշխավորում ենք:*

Գնահատման եւ ընտրության կարգ

Ծրագրերը կդիտարկվեն գնահատող հանձնաժողովի կողմից: Գնահատումը հիմնված կլինի կենտրոնի ընդհանուր առաքելության ու նպատակների վրա (մանրամասները կարող եք գտնել մեր կայքում՝ (www.praguecivilsociety.org): Հաշվի են առնվելու ծրագրի գաղափարի արդիականության ու ներուժի, ծրագրի ափելի ազդեցության, ինչպես նաև ծրագրի իրատեսական պլանավորման ու կազմակերպության անցած ուղու վրա:

Դիմումները կգնահատեն կենտրոնի աշխատակիցներից, խորհրդի անդամներից և արտաքին փորձագետներից կազմված հանձնաժողովը:

Հավելյալ տեղեկատվության անհրաժեշտության դեպքում հնարավոր է, որ Կենտրոնի ներկայացուցիչները կապվեն ձեզ հետ:

Ընտրված ծրագրերի մասին տեղեկություն կտրամադրվի մինչև մարտի վերջ: